

**ԱՆԴՐՄԱՀՄԱՆԱՅԻՆ ԵՆԹԱՏԵՔՍՏՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Սույն Արձանագրության Կողմերը,

ընդունելով շրջակա միջավայրին՝ ներառյալ առողջապահությանն առնչվող նկատառումները պլանների ու ծրագրերի և, որքանով հարկն է, քաղաքականության ու օրենսդրության մշակման և ընդունման գործընթացներում ներգրավելու կարևորությունը,

հանձն առնելով խթանել կայուն զարգացումը և, հետևաբար, հիմնվելով Միավորված ազգերի կազմակերպության Շրջակա միջավայրի և զարգացման համաժողովի եզրակացությունների վրա (Ռիո դե Ժանեյրո, Բրազիլիա, 1992), մասնավորապես Շրջակա միջավայրի և զարգացման մասին Ռիոյի հռչակագրի 4-րդ և 10-րդ սկզբունքների և Օրակարգ 21-ի վրա, ինչպես նաև Շրջակա միջավայրի և առողջապահության երրորդ նախարարական համաժողովի (Լոնդոն, 1999) և Կայուն զարգացման համաշխարհային զագաթնաժողովի (Յոհաննեսբուրգ, Հարավային Աֆրիկա, 2002) արդյունքների վրա,

հաշվի առնելով 1991 թվականի փետրվարի 25-ին Ֆինլանդիայի Էսպո քաղաքում ընդունված Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին կոնվենցիան և 2001 թվականի փետրվարի 26-ին և 27-ին Սոֆիայում վերոնշյալ կոնվենցիայի Կողմերի հմ. II/9 որոշումը, որով որոշում կայացվեց մշակել ռազմավարական էկոլոգիական գնահատման իրավապարտադիր արձանագրություն,

ընդունելով, որ ռազմավարական էկոլոգիական գնահատումը պետք է կարևոր դեր ունենա պլանների, ծրագրերի և, որքանով հարկն է, քաղաքականության ու օրենսդրության մշակման և ընդունման գործում, և որ ռազմավարական էկոլոգիական գնահատման սկզբունքների ավելի լայն կիրառումը պլանների, ծրագրերի, քաղաքականության և օրենսդրության նկատմամբ էլ ավելի կամրապնդի շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցությունների պարբերական վերլուծությունը,

ընդունելով 1998 թվականի հունիսի 25-ին Դանիայի Ասրիուս քաղաքում ընդունված՝ Շրջակա միջավայրի հարցերով որոշումների ընդունման գործընթացում հանրային մասնակցության, տեղեկատվության և արդարադատության հասանելիության մասին կոնվենցիան և ի գիտություն ընդունելով Կողմերի առաջին հանդիպման ժամանակ ընդունված Լուկայի հռչակագրի համապատասխան պարբերությունները,

հետևաբար *գիտակցելով* ռազմավարական էկոլոգիական գնահատմանը հանրության մասնակցությունն ապահովելու կարևորությունը,

ընդունելով ներկա և ապագա սերունդների առողջության և բարեկեցության համար այն օգուտը, որը կստացվի, եթե մարդկանց առողջությունը պահպանելու և բարելավելու անհրաժեշտությունը դիտարկվի որպես ռազմավարական էկոլոգիական գնահատման անբաժանելի մաս, և ընդունելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից այս ուղղությամբ տարվող աշխատանքը,

հիշելով անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա առաջարկվող պլանների ու ծրագրերի և, որքանով հարկն է, քաղաքականության և օրենսդրության ազդեցությունները գնահատելու գործում միջազգային համագործակցության ամրապնդման անհրաժեշտությունն ու կարևորությունը,

համաձայնեցին հետևյալի մասին:

Հոդված 1 ՆՊԱՏԱԿԸ

Սույն Արձանագրության նպատակն է ապահովել շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության պահպանման բարձր մակարդակը հետևյալ կերպով.

ա) ապահովել, որ շրջակա միջավայրին՝ ներառյալ առողջությանն առնչվող նկատառումները լիակատար ձևով հաշվի առնվեն պլաններ և ծրագրեր մշակելիս,

բ) նպաստել, որ շրջակա միջավայրին՝ ներառյալ առողջությանն առնչվող նկատառումները ընդգրկվեն քաղաքականություն և օրենսդրություն մշակելիս,

գ) ստեղծել պարզ, թափանցիկ և արդյունավետ ընթացակարգեր ռազմավարական էկոլոգիական գնահատման համար,

դ) ապահովել ռազմավարական էկոլոգիական գնահատմանը հանրության մասնակցությունը և

ե) այս միջոցներով շրջակա միջավայրին՝ ներառյալ առողջությանն առնչվող խնդիրներն ընդգրկել կայուն զարգացման համար նախատեսված հետագա միջոցառումներում և գործիքներում:

Հոդված 2 ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Արձանագրության նպատակների համար.

1. Կոնվենցիան նշանակում է՝ Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին կոնվենցիա,

2. Կողմն նշանակում է՝ սույն Արձանագրության Պայմանավորվող կողմ, եթե տեքստում այլ բան չի նշվում,
3. Ծագման կողմն նշանակում է՝ սույն Արձանագրության Կողմ կամ Կողմեր, որոնց իրավասության շրջանակներում նախատեսվում է որևէ պլանի կամ ծրագրի մշակում,
4. Տուժող կողմն նշանակում է՝ սույն Արձանագրության Կողմ կամ Կողմեր, որոնց կարող է վնաս հասցվել շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա որևէ պլանի կամ ծրագրի անդրսահմանային ազդեցություններից,
5. Պլաններ կամ ծրագրերն նշանակում է՝ պլաններ ու ծրագրեր և դրանցում կատարված ցանկացած փոփոխություն, որոնք՝
 - ա. պահանջվում են օրենսդրական, կանոնակարգող կամ վարչական դրույթներով և
 - բ. ենթակա են մշակման և/կամ ընդունման որևէ մարմնի կողմից կամ որևէ մարմնի կողմից մշակվում են՝ պաշտոնական ընթացակարգով խորհրդարանի կամ կառավարության կողմից ընդունվելու համար,
6. Ռազմավարական էկոլոգիական գնահատումն նշանակում է՝ շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա հնարավոր ազդեցությունների գնահատում, որը ներառում է շրջակա միջավայրի մասին հաշվետվության և դրա նախապատրաստման շրջանակների սահմանումը, հանրային մասնակցության և խորհրդակցությունների իրագործումը և շրջակա միջավայրի մասին հաշվետվությունը, հանրային մասնակցության և խորհրդակցությունների արդյունքները հաշվի առնելը պլանի կամ ծրագրի մեջ,
7. Շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա ազդեցությունն նշանակում է՝ ցանկացած ազդեցություն շրջակա միջավայրի վրա՝ ներառյալ մարդու առողջությունը, բուսական աշխարհը, կենդանական աշխարհը, կենսաբազմազանությունը, հողը, կլիման, օդը, ջուրը, լանդշաֆտը, բնության վայրերը, նյութական արժեքները, մշակութային ժառանգությունը և այս գործոնների փոխազդեցությունը,
8. Հանրությունն նշանակում է՝ մեկ կամ ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձինք և, օրենսդրությանը կամ պրակտիկային համապատասխան, դրանց ընկերակցություններ, կազմակերպություններ և խմբեր:

Հոդված 3
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական, կանոնակարգող և այլ համապատասխան միջոցներ՝ սույն Արձանագրության դրույթները պարզ և թափանցիկ շրջանակներում իրագործելու համար:
2. Յուրաքանչյուր Կողմ ջանում է ապահովել պաշտոնյաների և պետական մարմինների աջակցության տրամադրումը հանրությանը և վերջինիս ուղղորդումը սույն Արձանագրության շրջանակում գտնվող հարցերում:
3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է այն ընկերակցություններին, կազմակերպություններին կամ խմբերին ճանաչումը և աջակցումը, որոնք նպաստում են սույն Արձանագրության ենթատեքստում շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության պահպանմանը:
4. Սույն Արձանագրության դրույթները չեն ազդում որևէ Կողմի իրավունքի վրա՝ սույն Արձանագրության շրջանակում գտնվող հիմնախնդիրների առնչությամբ լրացուցիչ միջոցառումներ կատարելու կամ ձեռնարկելու համար:
5. Յուրաքանչյուր Կողմ նպաստում է սույն Արձանագրության նպատակների առաջնդամանը որոշումների կայացման միջազգային գործընթացներում և համապատասխան միջազգային կազմակերպությունների շրջանակներում:
6. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իրենց իրավունքները սույն Արձանագրության դրույթների համաձայն կատարող անձինք իրենց գործունեության համար չպատժվեն, չհետապնդվեն կամ հարձակման չենթարկվեն: Սույն դրույթը չի ազդում ազգային դատարանների իրավունքների վրա դատավարության ընթացակարգերում դատական ծախսերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս:
7. Սույն Արձանագրության համապատասխան դրույթների շրջանակներում հանրությունն իրավունք ունի իրագործելու իր իրավասությունները՝ առանց քաղաքացիության, ազգության կամ մշտական բնակության վայրի առնչությամբ որևէ խտրականության, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ առանց որևէ խտրականության գրանցման վայրի կամ փաստացի գործունեության կենտրոնի նկատմամբ:

Հոդված 4

ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է ռազմավարական էկոլոգիական գնահատման իրագործումը 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում նշված պլանների և ծրագրերի համար, որոնք հնարավոր է՝ զգալի ազդեցություն կունենան շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա:
2. ռազմավարական էկոլոգիական գնահատումն իրականացվում է այն պլանների և ծրագրերի համար, որոնք մշակվում են գյուղատնտեսության,

անտառային տնտեսությունների, ձկնաբուծության, էներգետիկայի, արդյունաբերության համար, ներառյալ հանքարդյունաբերությունը, տրանսպորտը, տարածաշրջանային զարգացումը, թափոնների կառավարումը, ջրի կառավարումը, հեռահաղորդակցությունը, զբոսաշրջությունը, քաղաքային և համայնքային տարածքների նախագծումը կամ հողօգտագործումը, և որոնք սահմանում են I Հավելվածում թվարկված նախագծերի հետագա իրագործման համար համաձայնություն ձեռք բերելու հիմքերը, և II Հավելվածում թվարկված այն նախագծերի համար, որոնք տվյալ երկրի օրենսդրությամբ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում են պահանջում:

3. Այլ պլանների և ծրագրերի համար, որոնք ընդգրկված չեն 2-րդ կետում և սահմանում են նախագծերի հետագա իրագործման համար համաձայնություն ձեռք բերելու հիմքերը, ռազմավարական էկոլոգիական գնահատումն իրականացվում է այն դեպքում, երբ Կողմը համապատասխան որոշում է կայացնում՝ 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն:

4. 2-րդ կետում նշված պլանների և ծրագրերի համար, որոնք սահմանում են տեղական մակարդակով փոքր տարածքների օգտագործումը, և 2-րդ կետում նշված պլաններում և ծրագրերում կատարվող աննշան փոփոխությունների համար ռազմավարական էկոլոգիական գնահատումն իրականացվում է միայն այն դեպքում, երբ Կողմը համապատասխան որոշում է կայացնում՝ 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն:

5. Սույն Արձանագրության առարկա չեն հանդիսանում հետևյալ պլաններն ու ծրագրերը.

ա. պլաններ և ծրագրեր, որոնց միակ նպատակն է ծառայել ազգային պաշտպանության կամ արտակարգ իրավիճակների հետ կապված քաղաքացիական կարիքներին,

բ. ֆինանսական կամ բյուջետային պլաններ և ծրագրեր:

Հոդված 5 ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. Յուրաքանչյուր Կողմ որոշում է, թե արդյոք 4-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերում նշված պլաններն ու ծրագրերը հնարավոր զգալի ազդեցություն կունենան շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա. կա՛մ պլանների և ծրագրերի անհատական ուսումնասիրությամբ, կա՛մ դրանց առանձին տիպերի սահմանման միջոցով, կա՛մ էլ այս երկու մոտեցումների համադրմամբ: Այս նպատակով յուրաքանչյուր Կողմ ցանկացած դեպքում հաշվի է առնում III Հավելվածում նշված չափանիշները:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ 9-րդ հոդվածի 1-ին կետում նշված բնապահպանական և առողջապահական մարմինների հետ անցկացվեն խորհրդակցություններ վերոնշյալ 1-ին կետում նշված ընթացակարգերը կիրառելիս:
3. Յուրաքանչյուր Կողմ ջանում է, որքանով հարկն է, հանրությանը հնարավորություն ընձեռել սույն հոդվածով սահմանված պլանների և ծրագրերի նախնական գնահատմանը մասնակցելու համար:
4. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է 1-ին կետին համաձայն արված եզրակացությունների՝ ներառյալ ռազմավարական էկոլոգիական գնահատում չպահանջելու պատճառների ժամանակին տրամադրումը հանրությանը՝ համապատասխան հանրային ծանուցումներով կամ համապատասխան այլ միջոցներով, ինչպիսիք են էլեկտրոնային լրատվամիջոցները:

Հոդված 6

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ

1. Յուրաքանչյուր Կողմ սահմանում է այն տեղեկությունների որոշման պայմանները, որոնք պետք է ընդգրկվեն 7-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան պատրաստվող՝ շրջակա միջավայրի մասին հաշվետվության մեջ:
2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ 9-րդ հոդվածի 1-ին կետում նշված բնապահպանական և առողջապահական մարմինների հետ անցկացվեն խորհրդակցություններ շրջակա միջավայրի մասին հաշվետվության մեջ ընդգրկվելիք համապատասխան տեղեկությունները որոշելիս:
3. Որտեղ հարկն է, յուրաքանչյուր Կողմ ջանում է մասնակցության հնարավորություններ ընձեռել հանրության համար շրջակա միջավայրի մասին հաշվետվության մեջ ընդգրկվելիք համապատասխան տեղեկությունները որոշելիս:

Հոդված 7

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Ռազմավարական էկոլոգիական գնահատում պահանջող պլանների և ծրագրերի համար յուրաքանչյուր Կողմ ապահովում է շրջակա միջավայրի մասին հաշվետվության մշակումը:
2. Սույն Արձանագրության 6-րդ հոդվածի որոշմանը համապատասխան՝ շրջակա միջավայրի մասին հաշվետվությունը բացահայտում, նկարագրում և գնահատում է պլանի կամ ծրագրի կամ դրանց ողջամիտ այլընտրանքային տարբերակների իրականացման արդյունքում շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա հնարավոր զգալի ազդեցությունները: Հաշվետվությունը պետք է պարունակի IV Հավելվածում առանձնանշված տեղեկությունները, որոնք կարող են խելամիտ կերպով պահանջվել՝ հաշվի առնելով:

ա. առկա գիտելիքները և գնահատման մեթոդները,

բ. պլանի կամ ծրագրի բովանդակությունը և մանրամասնության աստիճանը և դրանց վերաբերյալ որոշում կայացնելու գործընթացի փուլը,

գ. հանրության շահերը և

դ. որոշում կայացնող մարմնի տեղեկատվական կարիքները:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ շրջակա միջավայրի մասին հաշվետվությունները լինեն սույն Արձանագրության պահանջները բավարարող որակով:

Հոդված 8

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է պատշաճ, ժամանակին և արդյունավետ հնարավորությունների ընձեռումը պլանների և ծրագրերի՝ ռազմավարական էկոլոգիական գնահատմանը հանրության մասնակցության համար, երբ հնարավոր տարբերակները դեռ առկա են:
2. Յուրաքանչյուր Կողմ, օգտագործելով էլեկտրոնային լրատվամիջոցները կամ համապատասխան այլ միջոցներ, ապահովում է պլանի կամ ծրագրի և շրջակա միջավայրի մասին հաշվետվության նախագծի ժամանակին հասանելիությունը հանրության համար:
3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է 1-ին և 4-րդ կետերի նպատակների համար՝ շահագրգիռ հանրության՝ ներառյալ համապատասխան հասարակական կազմակերպությունների բացահայտումը:
4. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ 3-րդ կետում նշված հանրությանը հնարավորություն ընձեռվի սահմանված ընդունելի ժամանակահատվածում արտահայտելու իր կարծիքը պլանի կամ ծրագրի նախագծի կամ շրջակա միջավայրի մասին հաշվետվության վերաբերյալ:
5. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ հստակ միջոցառումներ սահմանվեն շահագրգիռ հանրությանը տեղեկացնելու և նրա հետ խորհրդակցելու համար, և դրանք հասանելի լինեն հանրությանը: Այս նպատակով յուրաքանչյուր Կողմ, որքանով հարկն է, հաշվի է առնում V Հավելվածում նշված տարրերը:

Հոդված 9

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

1. Յուրաքանչյուր Կողմ նշանակում է այն լիազորված մարմինները, որոնց հետ պետք է խորհրդակցի, և որոնք շրջակա միջավայրի և առողջության պահպանությանն առնչվող իրենց պարտավորությունների բերումով հավանականորեն առնչվում են որևէ պլանի կամ ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա ազդեցությունների հետ:
2. Պլանի կամ ծրագրի նախագիծը և շրջակա միջավայրի մասին հաշվետվությունը տրամադրվում են 1-ին կետում նշված մարմիններին:
3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ 1-ին կետում նշված մարմիններին պատշաճ, ժամանակին և արդյունավետ կերպով հնարավորություն ընձեռվի հայտնելու իրենց կարծիքը պլանի կամ ծրագրի նախագծի կամ շրջակա միջավայրի մասին հաշվետվության վերաբերյալ:
4. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ հստակ միջոցառումներ սահմանվեն 1-ին կետում նշված բնապահպանական և առողջապահական մարմիններին տեղեկացնելու և նրանց հետ խորհրդակցելու համար:

Հոդված 10

ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Երբ Ծագման կողմը գտնում է, որ որևէ պլանի կամ ծրագրի իրականացումը հավանական զգալի անդրսահմանային ազդեցություն ունի շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա, կամ երբ հնարավոր Տուժող կողմն է այդ պահանջում, Ծագման կողմը, նախքան պլանի կամ ծրագրի ընդունումը, հնարավորինս կարճ ժամկետում այդ մասին ծանուցում է Տուժող կողմին:
2. Այդ ծանուցումն այլ բաների հետ մեկտեղ պետք է պարունակի.
 - ա. պլանի կամ ծրագրի նախագիծը և շրջակա միջավայրի մասին հաշվետվությունը՝ ընդգրկելով տեղեկատվություն շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա հնարավոր անդրսահմանային ազդեցությունների մասին, և
 - բ. որոշում կայացնելու ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվություն՝ ներառյալ նշումներ կարծիքների ներկայացման համար խելամիտ ժամկետների մասին:
3. Տուժող կողմը ծանուցման մեջ նշված ժամանակահատվածում տեղյակ է պահում Ծագման կողմին, թե արդյոք ցանկանում է նախքան պլանի կամ ծրագրի ընդունումը խորհրդակցել, և նման ցանկության դեպքում շահագրգիռ Կողմերը սկսում են խորհրդակցությունները պլանի կամ ծրագրի իրագործման արդյունքում շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա հնարավոր անդրսահմանային ազդեցությունների և այն միջոցառումների մասին, որոնք նախատեսվում են վնասակար ներգործությունները կանխարգելելու, նվազեցնելու կամ մեղմացնելու համար:

4. Այդպիսի խորհրդակցությունների անցկացման դեպքում շահագրգիռ Կողմերը համաձայնության են գալիս հստակ միջոցառումների շուրջ, որոնք կապահովեն, որ Տուժող կողմի շահագրգիռ հանրությունը և 9-րդ հոդվածի 1-ին կետում նշված մարմինները տեղեկացվեն և հնարավորություն ստանան ողջամիտ ժամկետներում պլանի կամ ծրագրի նախագծի և շրջակա միջավայրի մասին հաշվետվության վերաբերյալ իրենց կարծիքը տալու:

Հոդված 11 ՈՐՈՇՈՒՄ

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ պլանը կամ ծրագիրն ընդունելիս պատշաճ կերպով հաշվի առնվեն.

ա. շրջակա միջավայրի մասին հաշվետվության եզրակացությունները,

բ. շրջակա միջավայրի մասին հաշվետվության մեջ նշված վնասակար ներգործությունները կանխարգելող, նվազեցնող կամ մեղմացնող միջոցառումները և

գ. 8-րդ և 10-րդ հոդվածներին համապատասխան ստացված կարծիքները:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ պլանը կամ ծրագիրն ընդունելիս հանրությունը, 9-րդ հոդվածի 1-ին կետում նշված մարմինները և 10-րդ հոդվածի համաձայն խորհրդակցություն անցկացրած Կողմերը տեղեկացված լինեն, և նրանց տրամադրվի պլանը կամ ծրագիրը այն հայտարարության հետ միասին, որում ամփոփ ներկայացվում է՝ ինչպես են շրջակա միջավայրին՝ ներառյալ առողջությանն առնչվող նկատառումները ներառվել դրանցում, 8-րդ և 10-րդ հոդվածների համաձայն ստացված կարծիքները ինչպես են հաշվի առնվել, ինչպես նաև՝ այդ պլանը կամ ծրագիրն ընդունելու պատճառները՝ ողջամիտ այլընտրանքային մյուս տարբերակների առկայության պարագայում:

Հոդված 12 ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

1. Յուրաքանչյուր Կողմ իրականացնում է 11-րդ հոդվածով ընդունված պլանների կամ ծրագրերի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա զգալի ազդեցությունների մոնիտորինգ, որպեսզի, այլ բաների թվում, վաղ շրջանում բացահայտի չկանխատեսված բացասական ազդեցությունները և ի վիճակի լինի համապատասխան մեղմացնող միջոցառումներ ձեռնարկելու:
2. Իրականացված մոնիտորինգի արդյունքները, ազգային օրենսդրությանը համապատասխան, տրամադրվում են 9-րդ հոդվածի 1-ին կետում նշված մարմիններին և հանրությանը:

Հոդված 13

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕՐԵՆՄԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Յուրաքանչյուր Կողմ ջանում է ապահովել, որ շրջակա միջավայրին՝ ներառյալ առողջությանն առնչվող հարցերը հաշվի առնվեն և, որքանով հարկն է, ներգրավվեն քաղաքականության և օրենսդրության իրենց առաջարկների պատրաստման գործընթացում, որոնք հավանական զգալի ազդեցություններ կունենան շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա:
2. 1-ին կետը կիրառելիս յուրաքանչյուր Կողմ հաշվի է առնում սույն Արձանագրության համապատասխան սկզբունքներն ու տարրերը:
3. Յուրաքանչյուր Կողմ, որքանով հարկն է, սահմանում է գործնական միջոցառումներ՝ շրջակա միջավայրին՝ ներառյալ առողջությանն առնչվող հարցերը 1-ին կետի համաձայն հաշվի առնելու և դրանք ներգրավելու համար՝ նկատի առնելով որոշումների կայացման գործընթացում թափանցիկության անհրաժեշտությունը:
4. Յուրաքանչյուր Կողմ սույն հոդվածի իրականացման մասին հաշվետվություն է ներկայացնում Կոնվենցիայի Կողմերի հանդիպման ժամանակ, որը հանդիսանում է սույն Արձանագրության կողմերի հանդիպում:

Հոդված 14

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ, ՈՐԸ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

1. Կոնվենցիայի Կողմերի հանդիպումը կհանդիսանա սույն Արձանագրության կողմերի հանդիպում: Կոնվենցիայի Կողմերի առաջին հանդիպումը, որը սույն Արձանագրության Կողմերի հանդիպում է հանդիսանում, հրավիրվում է սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ ուշ, քան մեկ տարի անց՝ Կոնվենցիայի Կողմերի հանդիպման հետ միասին, եթե վերջինիս հանդիպումը նշանակված է այս ժամանակահատվածում: Կոնվենցիայի Կողմերի հաջորդ հանդիպումները, որոնք սույն Արձանագրության Կողմերի հանդիպում են հանդիսանում, հրավիրվում են Կոնվենցիայի Կողմերի հանդիպումների հետ միասին, եթե Կոնվենցիայի Կողմերի հանդիպման ժամանակ, որը սույն Արձանագրության Կողմերի հանդիպում է հանդիսանում, այլ բան չի որոշվել:
2. Կոնվենցիայի այն Կողմերը, որոնք սույն Արձանագրության Կողմեր չեն, կարող են որպես դիտորդ մասնակցել Կոնվենցիայի Կողմերի ցանկացած հանդիպման ընթացքին, որը սույն Արձանագրության Կողմերի հանդիպում է հանդիսանում: Երբ Կոնվենցիայի Կողմերի հանդիպումը հանդիսանում է սույն Արձանագրության Կողմերի հանդիպում, սույն Արձանագրության շրջանակներում որոշումներն ընդունում են միայն Արձանագրության Կողմերը:
3. Երբ Կոնվենցիայի Կողմերի հանդիպումը հանդիսանում է Արձանագրության Կողմերի հանդիպում, և Կողմերի Հանդիպման խորհրդի ցանկացած անդամ, որը

Կոնվենցիայի Կողմ է ներկայացնում, սակայն այդ պահին սույն Արձանագրության Կողմ չի հանդիսանում, այդ դեպքում նա փոխարինվում է մեկ այլ անդամով, որն ընտրվում է սույն Արձանագրության Կողմերից և նրանց կողմից:

4. Կոնվենցիայի Կողմերի հանդիպումը, որը հանդիսանում է Արձանագրության Կողմերի հանդիպում, կանոնավոր վերահսկողություն է կատարում սույն Արձանագրության իրականացման նկատմամբ, և այդ նպատակով՝

ա. վերանայում է ռազմավարական էկոլոգիական գնահատման համար քաղաքականությունը և մեթոդաբանական մոտեցումները՝ նպատակ ունենալով էլ ավելի բարելավելու սույն Արձանագրությամբ նախատեսված գործընթացները,

բ. փոխանակում է տեղեկություններ ռազմավարական էկոլոգիական գնահատման և սույն Արձանագրության իրագործման ժամանակ ձեռք բերված փորձի վերաբերյալ,

գ. որքանով հարկն է՝ ձգտում է ապահովել այն իրազեկ մարմինների ծառայությունները և համագործակցությունը, որոնք փորձառություն ունեն սույն Արձանագրության նպատակների իրագործման հարցում,

դ. այնպիսի լրացուցիչ մարմիններ է հիմնում, որոնք անհրաժեշտ է գտնում սույն Արձանագրության իրագործման համար,

ե. ըստ անհրաժեշտության՝ դիտարկում և ընդունում է սույն Արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու առաջարկությունները և

զ. դիտարկում և նախաձեռնում է այլ լրացուցիչ գործողություններ՝ ներառյալ սույն Արձանագրության և Կոնվենցիայի շրջանակներում իրականացվող համատեղ գործողությունները, որոնք կարող են պահանջվել սույն Արձանագրության նպատակներին հասնելու համար:

5. Կոնվենցիայի Կողմերի հանդիպման ընթացակարգային կանոնները համապատասխան փոփոխություններով կիրառվում են սույն Արձանագրության համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ միաձայն համաձայնությամբ այլ բան է որոշվում Կողմերի հանդիպման ժամանակ, որը Արձանագրության Կողմերի հանդիպում է հանդիսանում:

6. Կոնվենցիայի Կողմերի առաջին հանդիպման ընթացքում, որը հանդիսանում է սույն Արձանագրության Կողմերի հանդիպում, քննարկվում և ընդունվում են Կոնվենցիայի կատարումը վերհսկելու ընթացակարգի՝ սույն Արձանագրության նկատմամբ կիրառելու եղանակները:

7. Յուրաքանչյուր Կողմ Կոնվենցիայի Կողմերի՝ Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող հանդիպման ընթացքում սահմանված ընդմիջումներով զեկուցում է Արձանագրության Կողմերի հանդիպում հանդիսացող Կոնվենցիայի

Կողմերին այն միջոցների մասին, որոնք ձեռնարկվել են սույն Արձանագրության իրագործման համար:

Հոդված 15

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՅԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՀԵՏ

Սույն Արձանագրության համապատասխան դրույթները կիրառվում են՝ առանց սահմանափակելու ՄԱԿ-ի ԵՏՀ-ի Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և Շրջակա միջավայրի հարցերով որոշումների ընդունման գործընթացում հանրային մասնակցության, տեղեկատվության և արդարադատության հասանելիության մասին կոնվենցիաները:

Հոդված 16

ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Բացառությամբ ստորև՝ 2-րդ կետով նախատեսված դեպքերի՝ Արձանագրության յուրաքանչյուր Կողմ ունի մեկ ձայն:
2. Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման կազմակերպություններն իրենց իրավասության շրջանակներում գտնվող հարցերի շուրջ օգտվում են քվեարկելու իրենց իրավունքից՝ սույն Արձանագրության կողմ հանդիսացող՝ անդամակցող պետությունների քանակին հավասար ձայներով: Այդ կազմակերպությունները չեն օգտվում քվեարկելու իրենց իրավունքից, եթե նրանց անդամ պետություններն օգտվում են քվեարկելու իրենց իրավունքից և՛ հակառակը:

Հոդված 17

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

Կոնվենցիայի 13-րդ հոդվածով ստեղծված քարտուղարությունը ծառայում է որպես սույն Արձանագրության քարտուղարություն, և քարտուղարության գործառույթների մասին Կոնվենցիայի 13-րդ հոդվածի ,աե-եզե կետերը համապատասխան փոփոխություններով կիրառվում են սույն Արձանագրության նկատմամբ:

Հոդված 18

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Սույն Արձանագրության հավելվածները կազմում են դրա անբաժանելի մասը:

Հոդված 19

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ցանկացած Կողմ կարող է սույն Արձանագրության մեջ առաջարկել փոփոխություններ:

2. 3-րդ կետի համաձայն՝ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի 2-րդից 5-րդ կետերում նշված՝ Կոնվենցիայում փոփոխությունների առաջարկման, ընդունման և ուժի մեջ մտնելու ընթացակարգը համապատասխան փոփոխություններով կիրառվում է սույն Արձանագրության նկատմամբ:
3. Սույն Արձանագրության նպատակների համար՝ փոփոխությունն ուժի մեջ մտնելու համար պահանջվող Կողմերի երեք քառորդը, որը վավերացրել, հաստատել կամ ընդունել է այն, հաշվարկվում է՝ հիմնվելով փոփոխության ընդունման ժամանակ Կողմերի քանակի վրա:

Հոդված 20
ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Վեճերի կարգավորման վերաբերյալ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի դրույթները համապատասխան փոփոխություններով կիրառվում են սույն Արձանագրության նկատմամբ:

Հոդված 21
ՍՏՈՐԱԳՐՈՒՄ

Սույն Արձանագրությունը բաց է ստորագրման համար 2003 թվականի մայիսի 21-ից մինչև 23-ը՝ Կիևում (Ուկրաինա), իսկ դրանից հետո՝ մինչև 2003 թվականի դեկտեմբերի 31-ը՝ Միավորված ազգերի կազմակերպության Նյու Յորքի կենտրոնական գրասենյակում՝ Եվրոպայի համար տնտեսական հանձնաժողովի անդամ պետությունների, ինչպես նաև 1947 թվականի մարտի 28-ի՝ Տնտեսական և սոցիալական Խորհրդի հմ. 36 (IV) որոշման 8-րդ և 11-րդ կետերի համաձայն՝ Եվրոպայի համար տնտեսական հանձնաժողովում խորհրդատվական կարգավիճակ ունեցող պետությունների և տարածաշրջանային տնտեսական ինտեգրման կազմակերպությունների համար, որոնք կազմված են Եվրոպայի համար տնտեսական հանձնաժողովի անդամ հանդիսացող ինքնիշխան պետություններից, որին անդամ պետությունները փոխանցել են սույն Արձանագրության շրջանակում կարգավորման առարկա հանդիսացող խնդիրների նկատմամբ իրավասությունը, ներառյալ այդ հարցերի մասով համաձայնագրեր կնքելու իրավասությունը:

Հոդված 22
ԱՎԱՆԴԱՊԱՀ

Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարը գործում է որպես սույն Արձանագրության ավանդապահ:

Հոդված 23
ՎԱՎԵՐԱՑՈՒՄ, ԸՆԴՈՒՆՈՒՄ, ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՎ ՄԻԱՑՈՒՄ

1. Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման, ընդունման և հաստատման 21-րդ հոդվածում նշված ստորագրող Պետությունների և տարածաշրջանային տնտեսական ինտեգրման կազմակերպությունների կողմից:
2. Սույն Արձանագրությունը բաց է միանալու համար 2004 թվականի հունվարի 1-ից՝ 21-րդ հոդվածում նշված Պետությունների և տարածաշրջանային տնտեսական ինտեգրման կազմակերպությունների համար:
3. Ցանկացած այլ Պետություն, որը նշված չէ վերոնշյալ 2-րդ կետում, որը Միավորված ազգերի կազմակերպության անդամ է, կարող է միանալ սույն Արձանագրությանը Կոնվենցիայի Կողմերի այն հանդիպմանը ստացված համաձայնությամբ, որը հանդիսանում է սույն Արձանագրության Կողմերի հանդիպում:
4. 21-րդ հոդվածում նշված՝ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման ցանկացած կազմակերպություն, որը դառնում է սույն Արձանագրության Կողմ, բայց որի անդամ պետություններից ոչ մեկը սույն Արձանագրության Կողմ չի հանդիսանում, պարտավորվում է կրել սույն Արձանագրությամբ ստանձնած բոլոր պարտավորությունները: Եթե այդպիսի կազմակերպության մեկ կամ ավելի անդամ պետություն սույն Արձանագրության Կողմ է հանդիսանում, կազմակերպությունը և նրա անդամ պետությունները որոշում են սույն Արձանագրությամբ իրենց պարտավորությունների կատարման համար համապատասխանաբար իրենց պատասխանատվությունը: Նման դեպքերում կազմակերպությունը և նրա անդամ պետությունները չեն կարող միաժամանակ կիրառել սույն Արձանագրությամբ ստանձնած իրենց իրավունքները:
5. Վավերացման, ընդունման, հաստատման և միանալու իրենց փաստաթղթերում 21-րդ հոդվածում նշված տարածաշրջանային տնտեսական ինտեգրման կազմակերպությունները հայտնում են իրենց իրավասությունների շրջանակը սույն Արձանագրությամբ կարգավորվող հարցերի նկատմամբ: Այս կազմակերպությունները նաև Ավանդապահին տեղեկացնում են իրենց իրավասությունների շրջանակում ցանկացած համապատասխան փոփոխության մասին:

Հոդված 24 **ՈՒԺԻ ՄԵՁ ՄՏՆԵԼԸ**

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման, հաստատման և միացման մասին տասնվեցերորդ փաստաթղթի ի պահ հանձնման ամսաթվից հետո՝ իննսուներորդ օրը:

2. Վերոնշյալ 1-ին կետի նպատակների համար՝ 21-րդ հոդվածում նշված տարածաշրջանային տնտեսական ինտեգրման կազմակերպության կողմից ի պահ հանձնված ցանկացած փաստաթուղթ չի դիտարկվի որպես հավելյալ այդ կազմակերպության անդամ պետությունների կողմից ի պահ հանձնված փաստաթղթերին:
3. 21-րդ հոդվածում նշված յուրաքանչյուր Պետության կամ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման կազմակերպության համար, որը վավերացնում, ընդունում կամ հաստատում է սույն Արձանագրությունը կամ միանում է դրան վավերացման, ընդունման, հաստատման և միանալու մասին տասնվեցերորդ փաստաթուղթը ի պահ հանձնելուց հետո, Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այդ Պետության կամ կազմակերպության կողմից վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթը ի պահ հանձնվելու ամսաթվից հետո՝ իննսուներորդ օրը:
4. Սույն Արձանագրությունը կիրառվում է այն պլանների, ծրագրերի, քաղաքականության և օրենսդրության նկատմամբ, որոնց մշակման մասին առաջին պաշտոնական փաստաթուղթն ընդունվել է սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո: Եթե որևէ Կողմի նկատմամբ, որի իրավասության ներքո նախատեսվում է պլանի, ծրագրի, քաղաքականության կամ օրենսդրության մշակումը, կիրառվում է 3-րդ կետը, ապա սույն Արձանագրությունը կիրառվում է այն պլանների, ծրագրերի, քաղաքականության և օրենսդրության նկատմամբ, որոնց մշակման մասին առաջին պաշտոնական փաստաթուղթն ընդունվել է սույն Արձանագրությունը տվյալ Կողմի համար ուժի մեջ մտնելուց հետո:

Հոդված 25

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ

Ցանկացած Կողմ կարող է դուրս գալ Արձանագրությունից՝ սույն Արձանագրությունը այդ Կողմի նկատմամբ ուժի մեջ մտնելու օրվանից չորս տարի հետո՝ ցանկացած ժամանակ, Ավանդապահին գրավոր ծանուցում ներկայացնելով: Ցանկացած այսպիսի հեռացում ուժի մեջ է մտնում ծանուցումը Ավանդապահի ստանալու օրվանից հետո՝ իննսուներորդ օրը: Ցանկացած այսպիսի հեռացում չի ազդում 5-9-րդ, 11-րդ և 13-րդ հոդվածների կիրառման վրա, որոնք վերաբերում են սույն Արձանագրության ներքո արդեն սկսված՝ ռազմավարական էկոլոգիական գնահատմանը կամ 10-րդ հոդվածի կիրառման վրա՝ կատարված ծանուցման կամ դիմումի նկատմամբ, որոնք արվել են նախքան դուրս գալը ուժի մեջ կմտնել:

Հոդված 26

ՆՈՒՅՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐ

Սույն Արձանագրության բնագիրը, որի անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն տեքստերը հավասարազոր են, հանձնվում են Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին:

Ի վկայումս որի՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Կիևում (Ուկրաինա) երկու հազար երեք թվականի մայիսի քսանմեկին:

Հավելված I
4-րդ հոդվածի 2-րդ կետում նշված նախագծերի ցանկ

1. Չմշակված նավթի գտման գործարաններ (բացի անմշակ նավթից միայն քսուքներ պատրաստող ձեռնարկությունները) և օրական 500 մետր-տոննա և ավել անուխ կամ վառվող թերթաքարերի գազիֆիկացիայի և հեղուկացման համար նախատեսված կառույցներ:
2. Ջերմաէլեկտրակայաններ և այրման այլ կառույցներ՝ 300 կամ ավել մեգավատտ ջերմահզորությամբ, միջուկային էլեկտրակայաններ և այլ ատոմային ռեակտորներ (բացառությամբ հետազոտական կայանների՝ տրոհվող և միջուկային ջերմային հումքի արտադրության և փոխակերպման համար, որոնց առավելագույն հզորությունը չի գերազանցում մեկ կիլովատտ անփոփոխ ջերմային բեռնվածությունը):
3. Բացառապես միջուկային վառելանյութի արտադրության և հարստացման, ճառագայթված միջուկային վառելանյութի վերամշակման կամ ռադիոակտիվ թափոնների պահեստավորման, տեղակայման և մշակման համար նախատեսված կառույցներ:
4. Թուջի և պողպատի նախնական ձուլման և երկաթ չպարունակող մետաղների արտադրության համար նախատեսված հիմնական կառույցներ:
5. Ասբեստի արդյունահանման, ասբեստի և ասբեստ պարունակող արտադրանքների մշակման և փոխակերպման, ասբեստացեմենտային արտադրանքի համար նախատեսված կառույցներ՝ տարեկան ավելի քան 20,000 մետր-տոննա պատրաստի արտադրանք, շփման նյութերի համար՝ տարեկան ավելի քան 50 մետր-տոննա պատրաստի արտադրանք, և ասբեստի այլ օգտագործումների համար՝ տարեկան ավելի քան 200 մետր-տոննա ծավալով:
6. Համալիր քիմիական կառույցներ:
7. Ավտոմայրուղիների*, ճեպընթաց ճանապարհների, երկար տարածության երկաթուղային երթևեկության ուղեգծերի, 2100 մետր և ավել գլխավոր թռիչքի հարթակով օդանավակայանների** շինարարություն:

* Սույն Արձանագրության նպատակների համար՝

«Ավտոմայրուղի» նշանակում է՝ մոտորային երթևեկության համար հատուկ նախագծված և կառուցված ճանապարհ, որը չի ծառայում իր եզրին գտնվող տնտեսություններին, և որը՝

ա. բացառությամբ հատուկ կետերում կամ ժամանակավորապես ապահովված է երթևեկության երկու ուղղությունների համար առանձին ճանապարհներով, որոնք իրարից առանձնացված են բաժանող գծով, որը նախատեսված չէ երթևեկության համար, կամ, բացառիկ դեպքերում, այլ միջոցներով,

բ. չի հատվում որևէ այլ ճանապարհի, երկաթուղու կամ տրամվայի գծերի կամ արահետների հետ և

գ. հատուկ նշված է որպես ավտոմայրուղի:

8. Լայն տրամագծով նավթատար և գազատար խողովակներ:
9. Առևտրային նավահանգիստներ, ինչպես նաև ներքին ջրային ուղիներ և ներքին նավագնացության համար նավահանգիստներ, որոնք հնարավորություն են տալիս փոխադրելու 1350 մետր-տոննայից ավել նավեր:
10. Այրման, քիմիական մշակման կամ թունավոր և վտանգավոր թափոնների թաղման համար նախատեսված՝ թափոնների հեռացման կառույցներ:
11. Մեծ ամբարտակներ և ջրամբարներ:
12. Ստորերկրյա ջրերի հանման միջոցներ, երբ հանվող ջրի տարեկան ծավալը հավասար է 10 միլիոն խորանարդ մետրի կամ դրանից ավել է:
13. Օդային չորացումով օրական 200 մետր-տոննա փայտանյութի և թղթի մշակում:
14. Մեծածավալ հանքարդյունահանում, մետաղային հանքաքարերի և ածխի արդյունահանում տեղում և մշակում:
15. Ցամաքից հեռու ածխաջրածնի արտադրություն:
16. Նավթային, նավթաքիմիական և քիմիական արտադրանքների մեծածավալ պահեստներ:
17. Ընդարձակ տարածքների անտառահատում:

«Ճեպընթաց ճանապարհ» նշանակում է՝ մեքենաների երթևեկության համար նախատեսված ճանապարհ, որին մուտքը հնարավոր է միայն ճանապարհների հատման և վերահսկվող խաչմերուկներում, և որի երթևեկելի մասում մասնավորապես արգելվում է մեքենաների կանգառը և կայանումը:

** Սույն Արձանագրության նպատակների համար՝

«Օդանավակայան» նշանակում է՝ օդանավակայան, որը համապատասխանում է 1944 թվականի՝ Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպություն հիմնելու մասին Չիկագոյի կոնվենցիայի սահմանմանը (հավելված 14):

Հավելված II

4-րդ հոդվածի 2-րդ կետում նշված այլ նախագծեր

1. Գյուղական տարածքներում հողատարածքների վերականգնման նախագծեր:
2. Նախագծեր՝ անմշակ հողերը կամ կիսաբնական տարածքներն ինտենսիվ գյուղատնտեսական նպատակներով օգտագործելու համար:
3. Գյուղատնտեսության համար ջրի կառավարման՝ ներառյալ ոռոգման և հողի չորացման նախագծեր:
4. Ինտենսիվ անասնապահության համար նախատեսված կառույցներ (ներառյալ թռչնաբուծությունը):
5. Նախնական անտառատնկում և անտառահատում՝ հողօգտագործման այլ տեսակի անցնելու նպատակով:
6. Ինտենսիվ ձկնաբուծություն:
7. Ատոմային էլեկտրակայաններ և այլ միջուկային ռեակտորներ^{*/}, ներառյալ այսպիսի էլեկտրակայանների և ռեակտորների շահագործումից հանումը կամ ապասարքավորումը (բացառությամբ հետազոտական կայանների՝ տրոհվող և միջուկային ջերմային հումքի արտադրության և փոխակերպման համար, որոնց առավելագույն հզորությունը չի գերազանցում մեկ կիլովատտ անփոփոխ ջերմային բեռնվածությունը), որոնք ընդգրկված չեն I Հավելվածում:
8. 220 կիլովատտ կամ ավել լարման հոսանքի և 15 կմ կամ ավել երկարությամբ օդային էլեկտրահաղորդիչ գծերի անցկացում և օդային գծերով էլեկտրաէներգիայի հաղորդման այլ նախագծեր:
9. Էլեկտրաէներգիայի, ջերմաէներգիայի և տաք ջրի արտադրության համար արդյունաբերական կառույցներ:
10. Գազ, գոլորշի և տաք ջուր ապահովող արդյունաբերական կառույցներ:
11. Հանածո վառելանյութի և բնական գազի վերգետնյա պահեստներ:
12. Դյուրավառ գազերի ստորգետնյա պահեստներ:
13. Ածխի և գորշ ածխի արդյունաբերական բրիկետավորում:

^{*/} Սույն Արձանագրության նպատակների համար՝ միջուկային էլեկտրակայանները և այլ միջուկային ռեակտորները դադարում են այդպիսի կառույցներ լինելուց, երբ ամբողջ միջուկային վառելիքը և ռադիոակտիվ վարակվածությամբ մյուս տարրերը մշտապես հեռացվում են կառույցի տարածքից:

14. Հիդրոէներգետիկ արտադրության կառույցներ:
15. Հողմային էներգիայի արտադրության համար կառույցներ (հողմաէլեկտրակայաններ):
16. I Հավելվածում չընդգրկված կառույցներ, որոնք նախատեսված են՝
 - միջուկային վառելիքի արտադրության կամ հարստացման համար,
 - ճառագայթված միջուկային վառելիքի վերամշակման համար,
 - ճառագայթված միջուկային վառելիքի վերջնական հեռացման համար,
 - բացառապես ռադիոակտիվ թափոնների վերջնական հեռացման համար,
 - բացառապես ճառագայթված միջուկային վառելիքի՝ արտադրության վայրից դուրս պահեստավորման համար (ծրագրված ավելի քան տասը տարվա համար) ,
 - ռադիոակտիվ թափոնների վերամշակման և պահեստավորման համար:
17. I Հավելվածում չընդգրկված քարի հանքեր, թուջի և տուֆի բաց արդյունահանման հանքեր:
18. I Հավելվածում չընդգրկված ստորգետնյա հանքարդյունաբերություն:
19. Միներալների արդյունահանում ծովային կամ գետային հողահանման միջոցով:
20. Խորը հորատումներ (մասնավորապես գեոջերմային հորատումներ, միջուկային թափոնների պահեստավորման համար հորատումներ, ջրի մատակարարման համար հորատումներ), բացառությամբ հողի կայունությունը հետազոտող հորատումների:
21. Վերգետնյա արդյունաբերական կառույցներ ածխի, նավթի, բնական գազի և հանքանյութերի, ինչպես նաև այրվող թերթաքարի արդյունահանման համար:
22. I Հավելվածում չընդգրկված՝ թուջի և պողպատի նախնական ձուլման ամբողջական ցիկլով կառույցներ:
23. Վերամշակելի թուջի և պողպատի արտադրության համար կառույցներ (առաջնային կամ երկրորդական հալում), ներառյալ շարունակական ձուլումը:
24. Երկաթ պարունակող մետաղների մշակման համար կառույցներ (տաք գլանման մամլահաստոցներ, մուրճերով դարբնոցներ, ձուլված մետաղաձուլվածքով պահպանիչ շերտապատում):
25. Երկաթ պարունակող մետաղների ձուլագործարաններ:

26. I Հավելվածում չընդգրկված՝ մետալուրգիական, քիմիական կամ էլեկտրոլիզի միջոցով հանքանյութերից, խտացրած կամ երկրորդական հումքերից երկաթ չպարունակող անմշակ մետաղների արտադրության համար կառույցներ:
27. I Հավելվածում չընդգրկված՝ երկաթ չպարունակող մետաղների հալման՝ ներառյալ ձուլման համար նախատեսված կառույցներ՝ բացառությամբ թանկարժեք մետաղների, ներառյալ վերականգնված ապրանքների (մաքրում, ձուլում):
28. Էլեկտրոլիզի և քիմիական գործընթացների կիրառմամբ մետաղների և պլաստիկ նյութերի մակերեսային վերամշակման համար կառույցներ:
29. Շարժիչային փոխադրամիջոցների արտադրություն և հավաքում, ինչպես նաև շարժիչային փոխադրամիջոցների շարժիչների արտադրություն:
30. Նավաշինարաններ:
31. Ինքնաթիռների հավաքման և վերանորոգման համար կառույցներ:
32. Երկաթուղային սարքերի արտադրություն:
33. Պայթուցիկ նյութերի կիրառումով դրոշմում:
34. Մետաղյա հանքանյութերի թրծման համար կառույցներ:
35. Քարածխի վառարաններ (չոր ածխի թորում):
36. Ցեմենտի արտադրության կառույցներ:
37. Ապակու, ինչպես նաև ապակե մանրաթելի արտադրության համար կառույցներ:
38. Հանքային նյութերի հալման՝ ներառյալ հանքային մանրաթելերի արտադրություն համար կառույցներ:
39. Այրման միջոցով կերամիկական ապրանքների, մասնավորապես տանիքածածկման կղմինդրների, աղյուսների, հրակայուն աղյուսների, կղմինդրների, կավե ամանեղենի կամ ճենապակու արտադրության համար կառույցներ:
40. I Հավելվածում չընդգրկված քիմիական նյութերի արտադրության համար կամ միջանկյալ մշակման արտադրանքի մշակման համար կառույցներ:
41. Դեղագործական ապրանքների, պեստիցիդների, ներկերի և լաքերի, էլաստոմերների և պերօքսիդների արտադրություն:

42. I Հավելվածում չընդգրկված՝ նավթի, նավթաքիմիական կամ քիմիական արտադրանքի պահեստավորման համար կառույցներ:
43. Բուսական ու կենդանական յուղի և ճարպերի արտադրություն:
44. Կենդանական և բուսական արտադրանքի փաթեթավորում և պահածոյացում:
45. Կաթնամթերքի արտադրություն:
46. Գարեջրագործություն և ածիկացում:
47. Հրուշակեղենի և մրգահյութերի արտադրություն:
48. Անասունների մորթման համար կառույցներ:
49. Արդյունաբերական օսլայի արտադրության համար կառույցներ:
50. Ձկնամթերքի և ձկան յուղի գործարաններ:
51. Շաքարի գործարաններ:
52. I Հավելվածում չընդգրկված արդյունաբերական ֆաբրիկաներ փայտանյութի, թղթի և տախտակների արտադրության համար:
53. Մանրաթելերի և կտորեղենի նախնական մշակման և ներկման ֆաբրիկաներ:
54. Մորթիների և կաշիների դաբադման ֆաբրիկաներ:
55. Ցելյուլոզայի մշակման և արտադրության համար կառույցներ:
56. Էլաստոմերային հիմքով ապրանքների արտադրություն և մշակում:
57. Արհեստական հանքաթելերի արտադրության համար կառույցներ:
58. Պայթուցիկ նյութերի վերականգնման կամ ոչնչացման համար կառույցներ:
59. I Հավելվածում չընդգրկված՝ ասբեստի արտադրության և ասբեստից արտադրանքների մշակման համար կառույցներ:
60. Սպանդանոցներ:
61. Փորձարկման դազգահներ շարժիչների, շարժանիվների և ռեակտորների համար:
62. Շարժիչային փոխադրամիջոցների մրցավազքի և փորձարկման մշտական ճանապարհներ:

63. I Հավելվածում չընդգրկված՝ գազի կամ նավթի տեղափոխման համար խողովակներ:
64. Քիմիական նյութերի տեղափոխման խողովակներ 800 մմ-ից ավել տրամագծով և ավելի քան 400 կմ երկարությամբ:
65. I Հավելվածում չընդգրկված՝ երկաթուղիների, խառը նավափոխադրումների հարմարությունների և վերջնակայանների կառուցում:
66. Տրամվայի գծերի, վերգետնյա և ստորգետնյա երկաթուղիների, կախովի ուղեգծերի, բացառապես կամ հիմնականում ուղևորների փոխադրման համար օգտագործվող նմանատիպ ուղեգծերի կառուցում:
67. I Հավելվածում չընդգրկված ճանապարհների կառուցում՝ ներառյալ գործող ճանապարհի վերակառուցումը և/կամ ընդլայնումը:
68. I Հավելվածում չընդգրկված նավահանգիստների և նավահանգստային կառույցների կառուցում՝ ներառյալ ձկնորսական նավահանգիստները:
69. I Հավելվածում չընդգրկված՝ ներքին նավագնացության համար ջրային ուղիների և դրանց նավագնացության համար նավահանգիստների կառուցում:
70. I Հավելվածում չընդգրկված առևտրային նավահանգիստներ, բեռնավորման և բեռնաթափման համար առափնյա և շարժական նավամատույցներ:
71. Կոյուղու և հեղեղաջրերի հեռացման աշխատանքներ:
72. I Հավելվածում չընդգրկված օդանավակայանների^{*/} և ակերողրոմների կառուցում:
73. I Հավելվածում չընդգրկված թափոնների հեռացման կառույցներ (ներառյալ աղբի թաղման վայրերը):
74. Անվտանգ թափոնների այրման կամ քիմիական մշակման համար կառույցներ:
75. Մետաղյա կտորտանքների, ինչպես նաև մեքենաների կտորների պահեստավորում:
76. Տիղմի կուտակման վայրեր:

^{*/} Սույն Արձանագրության նպատակների համար՝ «Օդանավակայան» նշանակում է՝ օդանավակայան, որը համապատասխանում է 1944 թվականի՝ Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպություն հիմնելու մասին Չիկագոյի կոնվենցիայի սահմանմանը (հավելված 14):

77. I Հավելվածում չընդգրկված ստորգետնյա ջրերի հանում կամ ստորգետնյա ջրերի արհեստական լիցքավորում:
78. Գետավազանների միջև ջրային ռեսուրսների տեղափոխման աշխատանքներ:
79. Կեղտաջրերի մաքրման կայաններ:
80. I Հավելվածում չընդգրկված ամբարտակներ և այլ կառույցներ ջրի հավաքման, երկարաժամկետ կամ մշտական պահեստավորման համար:
81. Էրոզիայի դեմ պայքարի՝ առափնյա և ծովային աշխատանքներ, որոնք, օրինակ, պատվարների, ամբարտակների, ծովապատնեշների և այլ ծովապաշտպան կառույցների շինարարությամբ կարող են փոփոխել ծովափը, բացառությամբ այդ կառույցների շահագործման և պահպանման աշխատանքների:
82. Հեռահար ջրանցույց կամուրջների կառույցներ:
83. Դահուկավազքի ուղիներ, ճոպանուղիներ և դրանց հետ կապված աշխատանքներ:
84. Զբոսանավերի կայաններ:
85. Քաղաքային տարածքներից դուրս գտնվող՝ արձակուրդային հանգստի բնակավայրեր և հյուրանոցային համալիրներ և դրանց հետ կապված աշխատանքներ:
86. Մշտական ճամբարների և շարժական տնակների համար նախատեսված վայրեր:
87. Թեմատիկ զբոսայգիներ:
88. Արդյունաբերական տարածքների բարելավման նախագծեր:
89. Քաղաքաշինական նախագծեր՝ ներառյալ առևտրային կենտրոնների և ավտոկանգառների շինարարությունը:
90. Ծովից ազատված հողերի բարելավում:

Հավելված III

5-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա հնարավոր զգալի ազդեցությունները որոշելու չափանիշները

1. Պլանի կամ ծրագրի համապատասխանությունը՝ դրանում շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջությանն առնչվող նկատառումները ներառելու համար, մասնավորապես, կայուն զարգացմանը նպաստելու նպատակով:
2. Այն աստիճանը, որով պլանը կամ ծրագիրը հիմքեր է սահմանում նախագծերի կամ այլ գործողությունների համար՝ դիրքի, բնույթի, չափսերի և գործառնական պայմանների կամ էլ ռեսուրսների բաշխման առնչությամբ:
3. Այն աստիճանը, որով պլանը կամ ծրագիրը ազդում է այլ ծրագրերի կամ պլանների վրա, ներառյալ ըստ ստորակարգության պլանները կամ ծրագրերը:
4. Պլանին կամ ծրագրին վերաբերող՝ շրջակա միջավայրին՝ ներառյալ առողջությանն առնչվող խնդիրները:
5. Շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա ազդեցությունների բնույթը, ինչպիսիք են հավանականությունը, տևողությունը, հաճախականությունը, հակադարձելիությունը, ծավալը և չափը (օրինակ՝ հնարավոր ազդեցության ենթարկվող աշխարհագրական տարածքը կամ բնակչության քանակը):
6. Շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության համար վտանգները:
7. Ազդեցությունների անդրսահմանային բնույթը:
8. Այն աստիճանը, որով պլանը կամ ծրագիրը ազդում է արժեքավոր կամ խոցելի տարածքների վրա, ներառյալ ազգային և միջազգային պահպանության կարգավիճակով լանդշաֆտները:

Հավելված IV
7-րդ հոդվածի 2-րդ կետում նշված տեղեկատվությունը

1. Պլանի կամ ծրագրի բովանդակությունն ու հիմնական նպատակները և կապը այլ պլանների ու ծրագրերի հետ:
2. Շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության ներկա վիճակի կարևոր կողմերը և դրա հնարավոր զարգացումները՝ պլանը կամ ծրագիրը չիրականացնելու դեպքում:
3. Շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության առանձնահատկությունները հնարավոր զգալի ազդեցության ենթակա վայրերում:
4. Պլանին կամ ծրագրին վերաբերող՝ շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության հետ կապված խնդիրները:
5. Շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության ոլորտներում միջազգային, ազգային և այլ մակարդակներով սահմանված նպատակները, որոնք վերաբերում են պլանին կամ ծրագրին, և այն ուղիները, որոնցով այդ նպատակներն ու շրջակա միջավայրին՝ ներառյալ առողջությանն առնչվող մյուս նկատառումները հաշվի են առնվել պլանները կամ ծրագրերը մշակելիս:
6. 2-րդ հոդվածի 7-րդ կետում սահմանված՝ շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա հնարավոր զգալի ազդեցությունները^{*/}:
7. Պլանի կամ ծրագրի իրագործման արդյունքում շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա հնարավոր զգալի վնասակար ազդեցությունները կանխելու, նվազեցնելու կամ մեղմացնելու համար միջոցառումները:
8. Այլընտրանքային տարբերակների ընտրության պատճառների հակիրճ շարադրանքը և գնահատման գործընթացի նկարագրությունը՝ ներառյալ այն դժվարությունները, որոնք առաջացել են ընդգրկվելիք տեղեկատվությունը տրամադրելիս, օրինակ՝ տեխնիկական թերությունները կամ համապատասխան գիտելիքների պակասը:
9. Պլանի կամ ծրագրի իրագործման հետևանքով շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա ազդեցությունների մոնիտորինգի համար նախատեսված միջոցառումները:
10. Շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա հնարավոր զգալի անդրսահմանային ազդեցությունները:
11. Տրամադրված տեղեկատվության ոչ տեխնիկական ամփոփագիրը:

^{*)} Այս ազդեցությունները պետք է ներառեն երկրորդային, գումարային, համատեղ, կարճա-, միջնա- և երկարաժամկետ, մշտական և ժամանակավոր, դրական և բացասական ազդեցությունները:

Հավելված V
8-րդ հոդվածի 5-րդ կետում նշված տեղեկատվությունը

1. Առաջադրված պլանը կամ ծրագիրը և դրա բնույթը:
2. Դրա ընդունման համար պատասխանատու մարմինը:
3. Նախատեսվող ընթացակարգը՝ ներառյալ.
 - ա. ընթացակարգի մեկնարկը,
 - բ. հանրության մասնակցության հնարավորությունները,
 - գ. նախատեսված ցանկացած հանրային լսման ժամանակը և վայրը,
 - դ. այն մարմինը, որից համապատասխան տեղեկատվություն կարելի է ստանալ, և որին կարող է հանձնվել հանրության ուսումնասիրության համար տրամադրված համապատասխան տեղեկատվությունը,
 - ե. այն մարմինը, որին կարելի է ներկայացնել կարծիքներն ու հարցերը և կարծիքներ ու հարցեր ներկայացնելու ժամանակացույցը,
 - զ. առաջադրված պլանի կամ ծրագրի վերաբերյալ շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության մասին տեղեկատվության հասանելիությունը:
4. Պլանի կամ ծրագրի նկատմամբ անդրսահմանային գնահատման ընթացակարգի կիրառման հավանականությունը:

Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2011թ. ապրիլի 24-ին